Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Կ-712-24.08.2020-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի տեքստում	Առաջարկվում է՝ 1. Առաջարկում ենք «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս այն համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը»՝ օրենքի վերնագիրը ներառելով չակերտներում: 2. Անհրաժեշտ է Նախագծի հոդվածների համարներից առաջ նշված «ՀՈԴՎԱԾ» բառը փոխարինել «Հոդված» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար	1. Ընդունվել է: 2.Ընդունվել է:	Ընդունվել է Ընդունվել է

			ունեցող հոդվածների տեսքով, հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը: 3. Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում նշված «տողից» եւ «տողով» բառերը համապատասխանաբար փոխարինել «կետից» եւ «կետով» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերրի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը:	3. Ընդունվել է:	Ընդունվել է